ՊԵՏԱԿԱՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

15/04/2016

Քաղաք Երևան, ապրիլ 15, երկու հազար տասնվեց թվական

Էրեբունի Պլազա բիզնես կենտրոնում 2016 թվականի ապրիլի 15-ին անցկացվեց հանրային քննարկում՝ պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Սուրեն Քրմոյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Սրբուհի Գալյան - ՀՀ հատուկ քննչական ծառայություն
Արամ Սմբատյան - ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
Հրանտ Թորոսյան - ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
Մերի Հակոբյան - ՀՀ դատախազություն
Գուրգեն Խաչատրյան - ՀՀ դատական դեպարտամենտ
Հակոբ Հակոբյան - ՀՀ քննչական կոմիտե
Տիգրան Պողոսյան - ՀՀ «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
Ռոման Ահարոնյան - ՀՀ Փաստաբանների պալատ
Տաթևիկ Նահապետյան - ՀՀ ֆինանսների նախարարություն
Հեթում Համամճյան - ՀՀ ֆինանսների նախարարություն
Հասմիկ Կամենդատյան - ՀՀ ֆինանսների նախարարություն
Աստղիկ Արղուշյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Նելլի Թումասյան - «Գերմանիայի միջազգային համագործակցություն» ընկերություն (IRZ)
Լուսիա Կլապաչովա - ԵՄ (EUD Project)
Կարինե Քեշաբյան - ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն (INL project)
Մարիցա Հովհաննիսյան - ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն (INL project)
Ջոն Անդրեսոն - ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն (INL project)
Ինննա Երանոսյան - ԵԱՀԿ

Զարուհի Սարգսյան - «ՀՀ դատավորների միություն» ՀԿ
Արտակ Կիրակոսյան - «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ
Աննա Մելիքյան - «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ
Մերի Ալեքսանյան - «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ
Սիրարփի Մուղդուսյան - «Սոցիալական արդարություն» ՀԿ
Հասմիկ Հարությունյան - «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ
Նունե Հայրապետյան - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
Սոնա Մաշուրյան - «Փաստինֆո» տեղեկատվական հարթակ
Միշա Շահինյան - Մասս Մեդիա կենտրոն
Անժելա Համբարձումյան - Մասս Մեդիա կենտրոն
Տաթև Մանուկյան - Panorama.am ինտերնետային կայք
Մարիամ Պետրոսյան - Times.am ինտերնետային կայք
Վահե Մկրտչյան - թարգմանիչ
Արփինե Սարգսյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի օգնական (քարտուղար)
Էմիլ Մարգարյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրենսդրության զարգացման և իրավական վերլուծությունների վարչության առաջին կարգի մասնագետ
Տաթև Խաչատրյան - ՀՀ արդարադատության նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող
Սոնա Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող
Արսեն Նավասարդյան - ՀՀ արդարադատության նախարարության «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ

ՕՐԱԿԱՐԳ՝

1. «Պրոբացիայի մասին», «Պրոբացիայի պետական ծառայության մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի քննարկում:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

Ողջույնի խոսքով հանդես եկավ նիստը նախագահողը: Նա բաց քննարկման կոչ արեց և առաջարկեց քննարկել խնդրո առարկա նախագծերը:

Նիստի մասնակիցները միաձայն հաստատեցին օրակարգը:

Օրակարգի միակ հարցի հետ կապված ներկայացվեց «Պրոբացիայի մասին», «Պրոբացիայի պետական ծառայության մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Նախագծերի փաթեթի ներկայացումից հետո ելույթ ունեցան հանրային քննարկման մասնակիցները, որոնք ներկայացրեցին նախագծերին վերաբերող հարցեր.

Գուրգեն Խաչատրյան՝

էլեկտրոնային հսկողության ծառայությունների ֆինանսավորումը պրոբացիայի ծառայության շահառուի միջոցների հաշվին իրականացնելը արդյո՞ք արտոնություն չի ստեղծում որոշակի խումբ շահառուների համար՝ խտրական վերաբերմունքի դրսևորման տեղիք տալով:

Աննա Մելիքյան՝

Վերասոցիալականացման միջոցառումները պարտադի՞ր են պրոբացիայի բոլոր շահառուների համար:

Համիկ Հարությունյան՝

Որ՞ն է հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն անվտանգության միջոցի էությունը:

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանց պրոբացիայի շահառուի համաձայնության պրոբացիայի շահառուի անձնական գործին գրավոր որոշմամբ կարող են ծանոթանալ...: Սույն ամրագրումն ու՞մ կողմից կազմված գրավոր որոշմանն է վերաբերում:

«Պրոբացիայի պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Պրոբացիայի պետական ծառայությունում պաշտոն զբաղեցնելու համար անձը պետք է ունենա նախագծով ամրագրված աշխատանքային ստաժը: Որքանո՞վ է նպատակահարմար նման պահանջի սահմանումը:

Տաթևիկ Նահապետյան՝

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասով ամրագրված՝ վարչական դատարան դիմելու կարգը արդյո՞ք չի հակասում Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի կանոններին:

Համիկ Կամենդատյան՝

Նախագծերի մշակման սկզբնական փուլում նախատեսվում էր, որ Պրոբացիայի պետական ծառայության ստեղծման համար պահանջվելու է 40 միլիոն ՀՀ դրամ, ներկայումս,

համաձայն նախագծերի փաթեթի հիմնավորման, անհրաժեշտ կլինի 200 միլիոն ՀՀ դրամ, իսկ ի՞նչ միջոցների հաշվին է կատարվելու ֆինանսավորումը:

«Պրոբացիայի պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Պրոբացիայի պետական ծառայությունում ծառայող անձը պետական ծառայող է: Միաժամանակ, նախագծերի փաթեթում առկա «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկում է պրոբացիայի ծառայողներին դասել զինծառայողներին հավասարեցված անձանց շարքին: Արդյո՞ք սա չի առաջացնում շփոթ, քանի որ, դրանով պայմանավորված, պետք է որոշվի նաև ծառայության հետագա ֆինանսավորման չափը:

Ի՞նչ չափանիշներով են մշակվել պրոբացիայի ծառայողների աշխատավարձերի գործակիցները:

Հեթում Համամճյան՝

«Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվող 7.1-րդ հավելվածի գործակիցներն արդյո՞ք թերի չեն կարգավորված, արդյո՞ք պահպանված են այն չափանիշները, որոնք դրված են պետական ծառայողներին տրվող աշխատավարձերի մշակման քաղաքականության հիմքում:

Ի՞նչպես են վարձատրվելու օրինակ պրոբացիայի շահառուների հետ հոգեբանական աշխատանքներ տանող աշխատակիցները, ո՞վ է որոշելու վարձատրության չափը, ի՞նչ հիմունքներով են նրանք աշխատելու:

Սրբուհի Գալյան՝

Համաձայն նախագծերի կարգավորումների՝ Պրոբացիայի պետական ծառայության ղեկավարին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը: Ինչպես գիտենք, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետին և գլխավոր հարկադիր կատարողին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջարկությամբ: Ի՞նչ չափանիշ է դրված այսպիսի տարբերակված մոտեցման հիմքում: Արդյո՞ք սա չի ազդում Պրոբացիայի պետական ծառայության հեղինակության վրա:

Ո՞վքեր ունեն հասանելիություն Պրոբացիայի պետական ծառայության տվյալների շտեմարանին: Պրոբացիայի պետական ծառայության կողմից պրոբացիայի շահառուի վերաբերյալ կատարվող հարցումներն ի՞նչ եղանակներով են լինելու՝ էլեկտրոնային, փաստաթղթային:

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 7-րդ հոդվածի համաձայն՝ Պրոբացիայի պետական ծառայության գործունեությունը հիմնված է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ համագործակցության վրա: Ի դեպ, նման ձևակերպումներ կան նախագծերի փաթեթի այլ հոդվածներումս ևս: Որքանո՞վ է նպատակահարմար նման ամրագրումը, քանի որ նշված ձևակերպումից համագործակցության շրջանակներից կարող են դուրս մնալ պետական այլ մարմինները:

Տիգրան Պողոսյան՝

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նշյալ օրենսգրքում լրացվող 206[11]-րդ հոդվածով սահմանվում է՝ Պրոբացիայի պետական ծառայության ծանուցագրով սահմանված ժամկետում անհարգելի պատճառով Պրոբացիայի պետական ծառայության մարմին չներկայանալը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Ելնելով պրոբացիայի նպատակներից՝ արդարացված չէ՞ արդյոք տուգանքի փոխարեն նախազգուշացման առաջացումը: Նախազգուշացում չնախատեսելու պայմաններում, կարծում եմ՝ հարկ է նվազեցնել տուգանքի չափը:

Համապատասխանու՞մ են արդյոք «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում ամրագրված՝ խորհրդատվական զեկույցի բովանդակությանն առնչվող դրույթները Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված հանձնարարականի կարգավորումներին:

Սիրարփի Մուղդուսյան՝

Ինչու՞ է սոցիալական երաշխիքների առումով տարբերակված մոտեցում ցուցաբերված պրոբացիայի շահառուի հետ աշխատող հոգեբանի և պրոբացիայի ծառայողի միջև: Մի՞թե պրոբացիայի շահառուի հետ աշխատելիս հոգեբանն իր վրա չի կրում այն ռիսկերը, որը կարող է կրել պրոբացիայի ծառայողը:

Արսեն Նավասարդյան՝

Նպատակահարմար չէ՞ նախատեսել նաև վերահսկողության պլանի բովանդակությունն ու ձևը՝ գործնականում հնարավոր խնդիրներից խուսափելու նպատակով:

Արամ Սմբատյան՝

Արդարացված չէ՞ Պրոբացիայի պետական ծառայության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության միջև աշխատակարգերի սահմանումը, քանի որ նախագծերի մի շարք

դրույթների համաձայն՝ նշյալ մարմիններն անհրաժեշտության դեպքում իրականացնելու են համատեղ միջոցառումներ:

Հակոբ Հակոբյան՝

Արդարացված չէ՞ զինծառայողներին հաշվառման վերցնելու կարգի սահմանումը՝ ելնելով գործնականում առկա խնդիրներից:

Հնչեցված հարցերին տրվեցին համապատասխան պարզաբանումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Համապատասխան փոփոխություններ կատարել նախագծերի փաթեթում՝ հիմք ընդունելով հանրային քննարկման արդյունքում արված առաջարկություններն ու դիտողությունները:
2. Սույն քննարկման հրապարակայնությունն ապահովելու համար հանրային քննարկման վերաբերյալ պատրաստված արձանագրությունը նիստի մասնակիցների հետ համաձայնեցվելուց հետո տեղադրել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում:

Արձանագրությունը բաղկացած է 6 էջից:

ՀՀ արդարադատության
նախարարի տեղակալ՝

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

Հանրային քննարկման քարտուղար՝

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ